ԵՓՐԵՄ ՍԵՊԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ 1829—1830 ԹԹ. ԳԱՂԹԻ ՄԱՍԻՆ

XIX դարի առաջին քառորդի վերջի ռուս-թուրքական պատերազմին հաջորդած արևմտահայության մի մեծաթիվ հատվածի գաղթի վերաբերյալ գոյություն ունի հարուստ գրականություն։ Դրանցից հայագիտության մեջ իր կարևորությամբ արժեքավորվել է 1891 թ. Թիֆլիսում Գյուտ քահանա Աղանյանցի կողմից, սկզբում «Արձագանք» հանդեսում, ապա առանձին գրքույկով հրատարակված «Կարսն գաղթը (1829—1830)» աշխատությունը։ Հեղինակը, չթվարկելով իր աղբյուրները, նշում է միայն, որ աշխատանքը շարադրել է քաղելով իր մոտ «գտնված հիշատակարաններից և պատմական անցքերից»1։

1994 թ. Սահակ վարդապետ Ճեմճեմյանի օգնությամբ Վենետիկի Մխիթարյան Միաբանության Դիվանում ծանոթացանք գաղթի տարիներին հովվական առաքելությամբ գաղթականներին ուղեկցող մխիթարյան վարդապետների և նրանցից հատկապես Հայր Եփրեմ վարդապետ Սեթյանի, կամ Սեթի նամակներին՝ հասցեագրված Միաբանության աբբահայր Սուքիաս Սոմալյանին2։

Եփրեմ Սեթյանը ծնվել էր Կ. Պոլսում 1791 թ. սեպտեմբերի 21-ին, քահանայական ձեռնադրությունը ստացել էր 1814 թ. Սուրբ Ղազարում։ 1829 թ. հայ կաթոլիկներին հովվելու նպատակով Վենետիկից անցնում է Ղրիմ, ուր հանդիպում է տեղում գտնվող մխիթարյան մեկ այլ վարդապետի՝ Մինաս Բժկյանին3, ապա՝ Օդեսա, այստեղից էլ նավով Բաթումի։ Ապա Արխապիա—Քութայիս—Գոքի—Թիֆլիս—Գուգարք—Շիրակ—Բասեն ճանապարհով հասնում է Էրզրում։ Այնուհետև ռուսական զորքերի ուղեկցությամբ դեպի Անդրկովկաս գաղթող հայ բնակչության հետ միասին վերադառնում է Անդրկովկաս, ուր և մնում է մինչև իր կյանքի վերջը։ Իր ճանապարհորդությունը Եփրեմ Սեթը մանրամասնորեն նկարագրել է իր «Ուղեգրութեան» մեջ, որն առայսօր անտիպ է և պահվում է Վենետիկի Մխիթարյանների Ձեռագրատանը4։

Ախալցխայում Եփրեմ Սեթը ծավալել էր բավական լայն հովվական և գիտամշակութային գործունեություն5։ Վախճանվել է 1838 թ. մայիսի 3-ին և թաղվել Ախալցխայում։

---

1 Տե՛ս Գյուտ ք. Աղանյանց. Կարսն գաղթը (1829—1830), Թիֆլիզ, 1891, էջ 3։

2 Սուքիաս Սոմալյան—Վենետիկի Մխիթարյան Միաբանության չորրորդ աբբա։ Ծնվել է 1776 թ. հունվարի 24-ին Կ. Պոլսում։ Քահանայացել է 1804 թ. դեկտեմբերի 9-ին։ Աբբա է ընտրվել 1824 թ. հունիսի 4-ին։ Արքեպիսկոպոս՝ 1826 թ. մայիսի 21-ից։ Վախճանվել է 1848 թ. փետրվարի 10-ին Ս. Ղազար կղզում։

3 Եփրեմ Սեթի ժամանման և մեկնման մասին բարեխղճորեն արված գրառումները գտանք Մինաս Բժշկյանի 1796—1851 թթ. ընդգրկող անտիպ «Օրագրութիւն»-ում (տե՛ս Դիւան Ս. Ղազարի, տուփ, 161)։ 1829 թ. հուլիսի 22-ին Մինաս Բժշկյանը արձանագրել է «Եկն առ իս հ[այր] Եփրեմ Սեթեան»։ Իսկ վերջինիս մեկնման մասին 1829 թ. նոյեմբերի 25-ին՝ «Զոքաւ հ[այր] Եփրէմ ընդ հ[այր] Եսայեայ յԱխրցխա»։

4 Սուրբ Ղազարի Ձեռագրատուն, ձեռագիր № 2761։ Մենք գտանք այս «Ուղեգրութեան» ևս մեկ օրինակ Միաբանության Դիվանում (տուփ 124, փաստաթուղթ 11, «Ուղեւորութիւն Հայր Եփրէմ Սեթեանի ի Հայս 1829», 61 թերթ, որոշ էջերի արանքում նամակներից զատ՝ դատարկ ամրացված թերթեր)։ Համեմատությունից պարզվեց, որ ձեռագրատան օրինակը ավելի կատարյալ և ընտիր օրինակ է։

5 Այնտեղ նրա կողմից ընդօրինակվեցին մի շարք ձեռագրեր։ Նա քիչ գործ չարեց նաև հայերեն արժեքավոր ձեռագրեր հավաքելու և Վենետիկ հասցնելու ուղղությամբ։ Իր «Ուղեգրության» մեջ (էջ 19) Սեթը գրում է. «...զտուն Իշխանատուն Արղութեանց, որոյ սեպուհն Նիկողայոս քաջահամբաւ, իմաստասէր եւ ազգասէր։ Են նորա եւ ընտիր գրչագիր մատեանք, յորս է Աստուածաշունչ գիրք, ձեռագիր Յոհաննու երգնկացւոյ։ Զլաւագոյնս ի մատենից տնտի,*